

ՄԱՍԻՍ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻ 8

16 ԱՊՐԻԼ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բառերու՝ զեղծումը (Խմբագրական)	Տ. Ա.
Աճեցիկի խօսքը (Ոսանաւոր— Ֆանթազի)	ԱԼՓԱՍԼԱՆ
Պոսթիկ ուսումնասիրութիւններ	ՏՕՄԻՆՈ
Շոգ—մոգ մտածումներ	ՔՐԻՋԱՆԹԵՄ
Կես—Բժեկական	ՏՕՔԹ. Յ. Տ. ՄՏԵՓԱՆԵԱՆ
Հասուածիկներ	ՇԱՒԱՍՊ ԾԻԱԾԱՆ
Սառած սիրտ (Ոսանաւոր)	ՊԱՐԷՏ

Խմբագրական Նօթեր. — Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերէի շաբեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար քառասուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստանական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Զեմ-Բէ Կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیّه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբուսական թէյ

Թէյը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց զվառւոր ըմպելիս դարձած է, ա՛յնքան բաղմամբիւ տեսակներ ունի որ, որդորել գործածողներուն համար բարեկան դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն ամառ և չափաւոր են իբրեւ թեթեւ համ և քողցրաբոյր, ամառ և թէյէն նոյնքան թաթեմի համ ու հոտ չունին, զերազանց են սակայն իբր կաշիքիչ և զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր օւրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զօնազանեն ուրիշ, տեսակներէ:

شاي زعفران



MARQUE DÉPOSÉE

Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կորեւորները կը միացնէ իր վրայ. այսինքն՝ գոյն, համահոտ և մանուշիկ կաշիքիչ և զօրացուցիչ անգույն և զգալի թէյ: Եւ այդ թէյն է ձաքոնի բիւր, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յաւաստի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի և եղանակի և ամէն ճաշակի:

Նավուեան և Իսազուլեան բէյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ շերտած է ճաքեակած զօտ թէյ մասնաւոր և դսկակած առեւտրով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ և կազդուրիչ:

Սոյն վաճառատուն մէջ կան նաեւ հեղեղահամ, ինչպէս, Սէյլան և Ճապոնի մեծաքանակ թէյեր:

Ուսադրութիւն մարգայի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածափօթ մանուկաուս և կնիստագէտ (gynécologue), Տօքթօր Էմիրզէ օր 15 տարեան գործունէութեամբ մեծ համբաւ առացած է, կը ծախուցաւ յորդոյ յաճախորդներուն թէյը՝ Բազմաշիքի խաղաղած է Պէքեար փողոց թիւ 18: Ինչ որ վերջինիս լաւ մասնագիտութեան կը բաւէ նաեւ սրբագոյն մէթատերազ շղային և հօգեկան ու երեւակալակաւ ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նշվրասթէն և tic անուանուած աչքի երեքի և ուսերու ազեղ և ալամայ շալժումները և դաշաւը, դադարումէ յետոյ եկած շղային խռովումները և Երիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գրեհմօլիքը, մօլիքնամօլիքը և այլն: Կրեակներէն դատ ամէն օր կէսօրէն սկսեալ սրչեւ երօք ժամ հիւանդ կընդունի, և ուրբաթ օրերը ճիւղաբար կը դադարէ վկայաւ աղքատները: 8-10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան և նորոգութեան (Դրասենեակ՝ Մահմաւոյ—փաշա, Թարագճըլար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37):

Այս հանրածափօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած և փոշոտ թէյ մետաքսէ և թէյ բարիք ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական զեղուից միջոցաւ, առանց օր և էտրտա կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'ունեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առեւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերու (կիւվէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով մշտաւոր գորգեր:

Սոյն գործարանը կը առնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծ թիւով ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնք պէտք է ուղղուին գրասենեակը:

Դիւրամտալիկ պայմաններ:

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱՆ ՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապստիլադիկ պնեւու եղած վնասում 300 միլիոն ֆր.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապստիլադուքիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՏԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳՆՈՒՄ ԵՒ ՊԱՆԵՄՍ 62 750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74% որով ՔԷՍ ԲԱԳԵՐՆԵԼԻ ընծայած երախտաբանութիւնը գէր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երախտաբանութեանէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծրանաւոր ամէնէն նշանաւոր դատաւորներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեայ ընկերութեան եւ Քրեաի Լիօնէի վարչական Խորհուրդի անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ, Դաւնադրանդիք ընկերութեան վարչական Խորհուրդի անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ, Կիլիզիւր, նաեւ կին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդէ. Տնօրէն Քրեաի Լիօնէի.

Թաւաքիչ Տնօրէն Ք. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՔ

Պայիս, Արեւմտեան-Համալս. Բաժնատէր Բաժնորդութիւն.

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրեաի Լիօնէի.

ԾԱՆՈԹ. — Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆնֆիչից որ կ'աւելու արդիւնք մե ի սխալման ուղիով անձնագրէս:

8—10

Ա.Գ.Ս.Մ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՄ

Ամեն տեսակ բոհաֆիլի ապրանքաց

Մեծ—Շուկայ, Քիւրճիկներու գրան կեց, Թ. 41—43

Նայնդէս, արանց եւ կանաչի ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլթան—Համալս, Միտիլի Դրամատուն դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թոհաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց եւ կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տալուութիւն, եւ դիւրամատուցելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղաւ վարդեան մեծապէս գոհ թողուցած է իր ըզգման յաճախորդները:

Կ'արժէ որ Շուկայ կլսող մէկն ընտանի այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հազաւու համար:

8—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զտա, մաքնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ստախքսի, աղեաց, միզային ճանրաններու հիւանդութիւնները, յղային աղարակութիւնները, հին եւ նոր գաղիկան ախտերը, Այս վերջին ախտերը առանց ստախքսի խանգարման եւ նարագոյն մեթոսներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օտ վերջը, Զորեքաւթի օրերը միայն ձրի 8—10

ՀԱՋԱՐԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիւտի Օրուան հետ համեմատելով խիստ քիչ կարեւորութիւն մը ունին: Խոզատանձ (սրբաճա) և արեան տկարութիւն և միւս արեան քեշութեան հետեւանքները, որոնք մարմնոյ տկարութեան նշաններն են, այսպիսի աղետները քարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամենակարեւոր և ամենաաքանչիւ բան մը համարուիլ: Ահա սիկ հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն անտերու գէմ:



SCOTT'S EMULSION

որ Առեգական մթնոլորտի մէջ գտնուած փոշիները չորցնելուն պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ:

ԲՍԿՕԹԻ ԲԵՂԱԳԻՐՈՒԹԻՈՒՆ

նաև մարդկային մարմինը շրջապատած բոլոր օրէքները հեռու կը վերնառէ:

ԲՍԿՕԹԻ ԲԵՂԱԳԻՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւն ունեցող տղոց կեանքը կը փրկէ:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Պ 23

Բոլոր բեղաճեցողները և բեղաճեցողները և ծնունդ:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒՅԻՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցմահ բոցակի միւլեր
VICTORIA ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
 բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
 Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ.
DE րուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան.
BERLIN սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
 տյ սկսնելով արեւելի եւ ուղղակի
 կառավարութեան հսկողութեան ներ-
 քէ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանթա
 եւ Քրեթի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
 ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ
 Պոլիս Քաթրեբօզլու Խան

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԷՃԵԱՆ

7-50

ԱՐԱՄԻՆ

54^ր ՏԱՐԻ, 2. ՇՐՁԱՆ




ԹԻԻ 8



16 ԱՊՐԻԼ 1905

ԲԱՌԵՐՈՒ ԶԵՂԾՈՒՄԸ



Իրականութիւնն ու գրագէտ բառերը ո՛չ մէկ ատեն այնքան չարաչար կերպով դործածուած են մեր մէջ, մեր խօսակցութեանց ու գրուածքներուն մէջ, որքան վերջին տարիներս: Ամէն տեղ և ամէն առթիւ զանոնք կրկնել, յեղեղելը ա՛լ մեքենական վարժութիւն մը դարձած է շատերուն, այնպէս որ ճշմարտապէս գրական գրուածք մը, այդ անունով նշանակուելու արժանի, կարծես կը կորսուի ամէն կարգի հրատարակութեանց ու խառնակ յիշատակութեանց դոհուրոհին մէջ, — անճաշակ ու անխորժ նուագածուներու խումբի մը խառնուած արուեստողէտի մը պէս որ դժուարաւ ինքզինքը լսելի պիտի ընել տար՝ շուրջը բարձրացող խալոտ արձագանգներէն:

Պիտակ մը դարձած է ան որ անխտիր կը կպցուի՝ շարադրութեան նախափորձեր ընողի մը գրուածքէն մինչև գաւառային նամականի մը կամ թարգմանածոյ քաղուածի մը ճակատը, որոնց ստորագրողներն ալ, նոյն անխտրականութենէն օգտուելով, ինքզինքնին կը դաւաճին գրագէտ: Ու այսպէսով, գրագէտ կը ճանչցուին լրագրագետներն ու խմբագիրները, — մինչդեռ լաւագոյն ու ոչ նուազ պատուաբեր կերպով պիտի պատշաճէր իրենց կամ մեզի՝ հրապարակագիր բառը, — պարզ յօդուածագիրները, թղթակիցները, թերթոնի թարգմանիչները և երբեմն մինչև իսկ թաղային կամ դպրոցական խմբագիրներու վրայ թեր ու գէժ տեսութիւններ պարզողները: Զեղծուած այնքան ընդհանրացած է որ ամէնէն չա՛տ երեւցողները ու ամէնէն առատ արտադրողները կը ցուցադրուին իբրև գրագէտ, և ընթերցող հասա-

րակութեան ստուար մասն ալ, որ բարակը չի փնտռեր, և կը կարգայ ու կ'անցնի՝ առանց դատելու և դանաղանելու բժականութեան, կը հետեւի հոսանքին:

Եւ ինչո՞ւ զարմանալ. երբ ամէն խառնութեան «առաջնակարգ վաճառական» է, երբ քիչ չատ նիւթական դիրքի տէր որ և է անհատ «ծանօթ անձնաւորութիւն» է, երբ անկիւնի լուծայափոխը «սեղանաւորական հրապարակի ներկայացուցիչ» է, — գուշակեցիք անշուշտ թէ հարսնիքներու և յուղարկաւորութեանց նկարագրութեան մէջ, — ամէն գրիչ շարժող ալ միթէ գրագէտ չըլլա՞ր իր կարգին:

Առաջին անգամ երբ «Աղնուաշուք» տիպոգրոսը ստեղծուեցաւ ու հրապարակ նետուեցաւ մեր ազգ. շրջանակին մէջ, զայն իրենց անունին կցուած տեսնելը մասնաւոր պատիւ մը կը սեպէին շատեր, և թէպէտ բառ իր քննադատներն ու հեգնողներն ալ ունեցաւ, բայց չի կորսնցուց իր յարգը՝ մինչև այն օրը ուր «Մեծապատիւ»ը վտարուեցաւ բոլորովին և ամէն հայ անհատ եղաւ աղնուաշուք: Նոյն անկումը վիճակուած է այսօր «գրագէտ»ին:

Ատեն մը մարդիկ կային, և թերևս մինչև հիմայ ալ կան, որոնք եթէ իրենց ուղղուած նամակի պահարանին վրայ Աղնուաշուք դըրուած չըլլար, կը մերժէին բանալու կամ եթէ թերթին հասցէն նոյն մակդիրը չի կրէր՝ կը դադրեցնէին բաժանորդագրութիւննին: Այսօր գրողներ կան, որոնք եթէ գրագէտ չի յորջորջուին խմբագրութեան մը կողմէ՝ կը դադրեցնեն աշխատակցութիւննին ու բարեւնին կը կարեն խմբագրին հետ: Ծի-

ծաղկիօրէն տխուր՝ բայց այս այսպէս է, դժբաղդաբար: Օրինակները կը վխտան շուրջերնիս:

Բառերու զեղծումին բնական հետեւանքը եղած է պարբերութեանց ալ զեղծումը, մասնաւորապէս նկարագրութեանց մէջ, ըլլա՛յ դպրոցական կամ եկեղեցական հանդէսի մը առթիւ, ըլլա՛յ հարսնիքի մը կա՛յ յուղարկաւորութեան մը առթիւ: Ինչ տարբերութեամբ՝ նոյն փոփոխներն են որ պիտի գործածուին, աաղտկացուցիչ դառնալու աստիճան միօրինակութեամբ, առանց որ եւ է պէսպիսութեան, առանց յատկանշութեան մը որ դանազանէր մէկը միւսէն: Թողունք մենք ու հանդիսաւոր տօներու արարողութիւնները, Մեծ-Պահլէի առտուան պարզ ժամերգութիւն մը նկարագրուած պահուն իսկ, պէտք է որ տէրտէրներէն յետոյ յիշատակուին դպրապետը, տիրացուները, թաղակա՛րն զրազիրը, նախակրթարանին վարժապետը, ամէնքն ալ: Նկարագրական այս մակընթացութիւնը իր ամէնէն լայն սահմանին մէջ երեւցաւ ու ողորկեց լրագրական հրապարակը՝ վերջին եօթը շաբաթներու Արեւագալներուն առթիւ ալ:

Հեռեւանքն այն կ'ըլլայ որ, թերթերուն մէջ յիշատակուելու, իր անունը տպուած տեսնելու մարմանը կը ներարկուի ամէն անհատի մօրթին մէջ, անհրաժեշտ պէտք մը կը դառնայ հանրութեան բոլոր դասակարգերուն համար, ամէնէն խոնարհներէն ու անծանօթներէն սկսելով որոնք պիտի ուզէին «ծանօթ անձնաւորութիւն» դառնալ լրագրի մը սիւնակներուն մէջ:

Կարելի չէ՞ր քիչ մը չափաւորել նկարագրական այս եռանդը, բառերու, յիշատակութեանց այս զեղծումը, որ օր աւուր կը սաստկանայ՝ զիրար գերազանցելու ճիգով ու մրցումով:

Գրագէտ ու գրականութիւն բառերուն չարաչար գործածութիւնը (abus) — որ ծայր տուաւ այս խորհրդածութեանց — սոհմանաւորելը մեղի՛, զրոգներուս կիյնայ. առաջին օրինակը մենք մեր մէջը տանք: Յետոյ, զիտակցութեան, համեստութեան ու չափա-

ւորութեան նոյն ջանքը՝ բուն իսկ հանրութեան վերաբերող մասին համար, ուր անուններու յորդումը, նկարագրութեանց ծայրայեղութիւնը, արժեմ—չարժեմը իրար խառնելու հակումը պէտք է բառնալ: Մեծ ճիգերու պէտք չիկայ այս անիմաստ ու անճաշակ սովորոյթներէն հրաժարելու համար. եթէ առաջին տպաւորութեամբ հանրութիւնը չ'ախորժի նշմարած փոփոխութենէն, դիւրաւ պիտի վարժուի անոր և աւելի՛՝ պիտի համակրի հետզհետէ:

Ինչո՞ւ ազնուական ճաշակ՝ մը, — որ անշուշտ չի չփոթուիր ազնուապետականին (aristocratique) հետ — չի տիրապետէ մեր լրագրական նկարագրութեանց մէջ, որ բարքերու ազնուացման կը տանի:


S. Ա.

ԶՈՒՀՍՃԵԱՆԻ ՄԱՀՍՐՁԱՆԸ

Ուղբացեալ երգստան Տիգրան Զուհաճեանի մահարձանին շինութեան գործը թէ և լրացած է, սակայն իր շիրիմը երկաթեայ վանդակօրմով մը շրջապատելու և գործը կատարելութեան հասցնելու համար, բարեւէր անձերէ խոստացուած են նպաստներ, որոնց վրայ պիտի աւելցուի հանգուցելոյն Օլիմբիա նախըգանքին վաճառումէն գոյացած հարոյթը: Այս նպատակու այդ երաժշտական հատուածին գինը 10 ղշ. էն 5 ղշ. ի գեղչուած է զիւրութիւն մը տալու համար անոնց որոնք կուզեն մասնակցիլ այս շինութեան գործին:

Իզմիրէ կը հաղորդեն թէ մահարձանին շինութիւնը ամբողջացած է ամէն կատարելութիւններով, որուն վրայ գրուած է նաև Աղեքս. էֆ. Փանոսեանի ոտանաւոր—տապաւնագիրը: Բացման հանդէսն ալ փառաւոր ընծայելու համար մասնախումբ մը կազմուած է. սակայն նիւթական բացը գոցելու համար հարկ եղած է չոր հրաւեր մը ընել Զեմքեի հեղինակին յիշատակը յարգողներուն:

ԱՆՆԵՐԵԼԻ ՔՕՍՔԸ



Մարիբը

—Ո՛ւր բարով :

Դերկոմար

—Կ'երթամ տեսնել կոմսուհին .

Կուգա՞ս հետս :

Մարիբը

—Ո՛չ, մեր մէջ բաւական հին

Դժտութիւն մը կայ . . . :

Դերկոմար

—Ինչպէ՞ս, ի՞նչ անցաւ :

Մարիբը

Օր մ'անկեղծօրէն ըսի—վշտացա՛ւ—

Թէ բնաւորութիւնն էր քիչ մը թըթու :

Դերկոմար

—Եկո՛ւր, ասիկայ հոգ մի ըներ դու :

Մարիբը

—Ձեմ կրնար . . . : Օր մ'ալ իր խիստ կանացի

Սուր ջըղայնութեան վրայ խնդացի :

Դերկոմար

—Փոքր յանցանք . . .

Մարիբը

—Փո՞քր . է՛հ, մեծէն չի սոսկաւ .

Օր մ'ալ ըսի թէ իր խելքն էր պակաս . . . :

Դերկոմար

—Ա՛յդ ալ պատճառ չէ քէնի մշտատես :

Մարիբը

—Անգամ մ'ալ ըսի թէ բարքն է թեթեւ . . . :

Դերկոմար

—Անկարեւոր խօսք . . .

Մարիբը

Եւ թէ անտարբեր՝

Անհաւատարիմ՝ Կոմսը կը խարէր . . .

Դերկոմար

—Ուրիշ բա՞ն . . .

Մարիբը

Ըսի թէ սիրահրաւէր

Գեղեցկութիւնն էր շատոնց կորսըէր . . .

Դերկոմար

—Քանի որ վերջին այդ խօսքն ըսեր ես ,

Մի՛ գար . . . Ձեր գործին չեմ խառնուիր ես :

(Ֆրանս . նման .)

Ա.Լ.ՓԱՍԼԱՆ

ՊԶՏԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔՐԻՋԱՆԹԵՄ

Գր. Զօհրապի «Ծանօթ Դէմքեր»-ու gal-
lerieին մէջ կը պակօր այս դէմքը—աւաջին
օրէն անծանօթ չմնալու կոչուած այս դե-
ւարթ ու համակրելի դէմքը - և ես, անար-
ժանաբար կուգամ այսօր մտցնել զինքը այդ
կալընիէն ներս, եթէ երբեք ատոր դուռը
դոցած չ'ըլլայ արդէն «Անհետացած սերունդ-
մը»ին պատուական հեղինակը:

Մնաց որ, իմ կարծիքովս, Քրիզանթէմ
արժանի է միամիտակը գրաւելու զատ կս-
լընի մը եթէ չեմ չափազանցեր—քանի որ
այնքան այլազան—տեղն է ըսել զարմանա-
զան—և նոր դեր մը կատարած է թրքահայ
գրականութեան մէջ, ըլլալով հիմնադրը
գրական գլորոցի մը որուն նմանը չ'ունինք
տակաւին այսօր ուրիշ և որուն ոչ ոք հա-
մարձակած է ալ առնել դուռը, ըլլայ հոն
աշակերտելու փափաքով իսկ, այնքան զգ-
ուար է այդ դպրոցին COURSE, որքան անկէ
վնտուրը զիւրին: Տարբեր բացատրութիւ-
նով, Քրիզանթէմ երգիծական, grivois
անուան տակ բնմ մը ունի այսօր ուր ինքը
միայն կ'երեւնայ, ինքը միայն կարող ըլլալով
երեւնալ հոն, իբր imitateur-transformiste
եթէ կուղէք, յաջողապէս ներկայացնելով
մեզի միանգամայն բոլոր դերերը շատ իրա-
կան և բնական կատակերգութեան մը զոր
տեսնելու համար անդիսականները զիրար
կը հրմշտկեն և առաջ կ'անցնին հետաքրք-
րութեամբ: Անոնք որ բաց, անբարոյական
կը գտնեն այդ կատակերգութիւնը, ապա-
հովապէս շատ կտին մնացող, աղէկ մը հաս-
կընալու անկարող և կամ հեռուէն բան մը
չ'տեսնող, չ'ըմբռնող հանդիսատեսներն են
որոնք սակայն պիտի վազեն դարձեալ գան
կանուխէն յաջորդ ներկայացումին, մի' տա-
րակուսիք:

Եւ զարմանալին այն է մանաւանդ որ
«Փարիս հանրմ»ին հեղինակը՝ իբրեւ բաց,

անբարոյական գրող մը դատապարտելու ո-
րոշումը տուած ընթերցողներէն շատեր volté
- face ըրած են հիմա և միմիայն Քրիզան-
թէմ կարդալու համար կը վճարեն թերթին:
«Արեւելեան Մամուլ»ի և «Մասիս»ի գրական
պարտէզներուն մէջ, այս Քրիզանթէմը այն-
քան արագ աճեցաւ ու աճացաւ որ զայն տես-
նողը կը հրճուի, կը սքանչանայ: Ո՞րուն է
փառքը. պարտէզին որուն հողը պարարտա-
ցուց Քրիզանթէմը, թէ ոչ նոյն իսկ ծաղիկին
որ իր գեղեցիկ ու հրապուրիչ տեսքովը կը
կեցնէ անցորդը:

Ստուգիւ, Քրիզանթէմի գրական սեռը
նմանցուցած եմ ես որքան համեղ նոյնքան
հաճելի այն օր սնճասին զոր մտքով ու մարմ-
նով յողնած մէկ վայրկեանին կը խմէ մարդ
ախորժակով և խորթանքով:

Զովացուցիչ ու զուարթացուցիչ գրակա-
նութիւն մը ուրեմն, ինչո՞ւ չէ: Երբ արդէն
ունինք քուն բերող, միկրէն տուող գրա-
կանութիւնը կարգ մը mazetteներու կողմէ
ի կիր առնուած, երբ ունինք մանաւանդ
ստամոքսի վրայ նստող գրականութիւն մը
médiocrité doréeներու կողմէ յղացուած,
այո՞, երբ բոլոր այս սեռերը ունինք գրա-
կանութեան վսեմ անունովը մեզ հրամցուե-
լու վրայ, ինչո՞ւ չի ճանչնանք, չի հաւա-
տանք թէ զուարթ ու աշխարհիկ գրականու-
թիւն մըն ալ կայ Քրիզանթէմի կողմէ մշակ-
ուած այնքան ճարտարօրէն ու այնքան
արժանօրէն:

Հիմա, տարբեր երազ մը հիւսնեք, տար-
բեր կերպով մը խօսինք իր վրայ: Պահ մը
ենթադրենք թէ այն միջոցին որ գրիչը ձեռ-
քըս, ձիւնի պէս կոյս թուղթին վրայ հա-
կած կը մտածեմ, տարօրինակ գաղափարը
ունեցած ըլլամ հրապարակաւ ուրանալու Բը-
րիզանթէմի արժանիքը իբր գրական մարդ

և զայն յաչքելու, խածնելու որոշումը տուած ըլլամ: Ենթադրենք նաև թէ տակաւին այս վերի տողերը չգրած իր վրայ, սկսած ըլլամ յօդուածս կարգ մը գէշ ու կրծու բառերով, վերջապէս ի մի բան Քրիզանթէմի տուած ըլլամ un coup de canif, ինչպէս կ'ըսէ Քրանսային:

Լա'ւ, եթէ այսպէս ըրած ըլլայի, տեսնենք որո՞նց հաճելի պիտի ըլլար գրածս: Օ՛, անկա հաճելի պիտի ըլլար:

Ա.—Անոնց որ Քրիզանթէմին նմանինք ըսելով երգիծական կը գրեն և ունեցածնին ալ վրայ կուտան Լաֆօնթէնի միամիտ գորտին պէս:

Բ.—Բոլոր այն Գիթիբիոս աղաներուն որոնք «աղջիկս կը կարդայ» ըսելով Քրիզանթէմի յօդուածը պարունակող թերթը տուն չեն տանիր... իրենք կարդալէ վերջ:

Դ.—Սյն բոլոր կղերականներուն որոնք *trèfle incarnat* կը գործածեն և Քրիզանթէմի յօդուածներէն գայթակղիլ կը ձեւացնեն:

Դ.—Անոնց որ առանց Քրիզանթէմը ճանչցած ըլլալու «չառ փիս կը գրէ» կ'ըսեն:

Ե.—Այն բոլոր թերթերուն որոնց յօդուած չի զրկէր Քրիզանթէմ:

Զ.—Բոլոր այն «Հայու կրնիկ»ներուն որոնց հետ աղէկ չէ Քրիզանթէմ:

Կը տեսնէք որ ասանկ տարօրինակ ենթադրութիւն մը շատ տարօրինակ արդիւնք մը ունեցաւ: Կարելի չէ երեւակայել արդարեւ թէ Քրիզանթէմի վրայ գէշ խօսելով այսքան մարդոց հաճելի կրնայի ըլլալ: Ապաքէն, շատ դիւրին բան է մէկ հարուածով տապալել գրական համբաւ մը որքան դիւրին չեղաւ Արիստոյմ աղաին ոտքի մէկ հարուածով դուրս վանել բոլոր «Մեծապատիւ մուրացկանները»: Եւ սակայն եթէ գիտնամ իսկ թէ բոլոր ղիս կարգացողները պիտի հակակրին ինծի, դարձեալ չեմ կրնար Քրիզանթէմին տալ ենթադրուած un coup de canif:

Եւ ինչո՞ւ արդեօք: Օ՛, շատ պարզ է: Նախ անոր համար որ Քրիզանթէմ հաճելի և սիրուն անհատականութիւն մը ցոյց տուած է իր գրականութեան մէջ: Անձնապէս

ալ սիրողներ կան ղինքը այնպէս ինչպէս որ կը սիրուն բոլոր... irrésistible կիները, տեսալ մը հիացումով ու ներողամտութիւնով խառն վերապահութեամբ մը: Յետոյ, չի մոռնանք որ մարդ պէտք է յարգել և սիրել գիտնայ տաղանդ մը և չի մոռնանք նաև որ իրեն չափ տաղանդաւոր գրողներ ալ շատ չիկան մեր մէջ: Անոնք որ չար ու կծու ակնարկութիւններ կ'ընեն իր մասին, կը նմանին այն կիներուն որոնք կը մոռնան իրենց ակռաներուն թափած ըլլալը և իրենց գեղեցիկ գրացուհին բաժնասեւու կ'ելլեն:

Քրիզանթէմ՝ անդադար շարժման մէջ գտնուող ղուարթ ու նրբամիտ դէմք մըն է: Իր գրականութիւնն ալ «ոտքի վրայ է» միշտ իրեն պէս, եթէ այսպէս կրնանք ըսել, միշտ ղուարթ է, միշտ նուրբ, միշտ ոստոստուն, քննալ չի գիտէր այդ գրականութիւնը: Քրիզանթէմի յաւիտենապէս *fleurir* լամբակը չի՞ յայտնէր արդէն իր հոգիին մշտական խանդը, եռանդը: Ծաղիկ մը, իր տաղանդն ալ, տարաշխարհիկ ու տեսլական ծաղիկ որուն կարծես բնութիւնն իսկ նախանձած ըլլար՝ գրականապէս անճաշակ միջավայրի մը մը մէջ ղնելով զայն: Նոյնպէս, Քրիզանթէմի վրայ տաղանդն է որ կ'ուղենք տեսնել միայն, իրեն կը ներենք որ ըլլայ կատակաբան, յաճախ անպատկառ և դարձեալ Քրանսական բացատրութեամբ, *gamin avec délices*: Իր շարժականութիւնն մէջ, իր ոճին մէջ, իր խօսակցութեան մէջ բոլոր նրբութիւնները կան հաճելի *gaminerie*ի մը որ հոս սովորուած չէ հաւանականաբար: Սըրաֆիտ *calembour* մը ըսած ատեն ուրախութեամբ կը համակուի, գէշ *calembour*ներէն ալ դժգոհ չի մտար սակայն, բայց դիտած եմ որ յաճախ այս վերջիններն են ղորս կը հրամայէ ընթերցողներուն... առի գգուելիւն: Մտերմութեան մէջ, իր բառախաղերը ա'լ աւելի համով են և գայթակղական:

Քրիզանթէմի հեգնոտ, ծիծաղկոտ բընաւորութիւնը, խմորը ունեցող մը չէր կըրնար արդէն հրեշտակի գրականութիւն մը ղնել: Ինչ որ կը գրէ, ո՛չ վառքի համար

է, ո՛չ ալ ուէքլամի համար. իր անհատական կեանքին շարունակութիւնն է իր լրագրական կեանքն ալ, կամ այս երկուքին ձուլումէն, խառնուրդէն է որ ծնած է «Քրիզանթէմեան գրականութիւն»ը, եթէ կարելի է այսպէս կոչել: Անկեղծ գրականութիւնը այսպէս պէտք է որ ըլլար արդէն, գրական մարդը տարբեր դոյնով ներկայանալու չէ ընկերական կեանքին մէջ և փոխադարձաբար: Բարոյականը մարդուն հոգիին մէջ ըլլալու է, ո՛չ թէ գրիչին ծայրը: Գէշ ըսելու, բայց ճիշդ ըսելու, ազատութիւն՝ բայց չգանցեցնելու այն արուեստը որ կայ Քրիզանթէմի գրականութեան մէջ, ինքնին մեծ արժէք մը ունի արդէն: Այս գրականութիւնը մարմնացումն է բոլոր drôle բառերուն, սրամիտ յղացումներուն, համարձակ խօսքերուն, chic դարձուածքներուն, մերկ պատկերներուն, cru ասացուածքներուն, բայց դարձեալ հոն գոյութիւն չունի այն գոհիկ, չուկայիկ, terre à terre չգիտեմ ինչը որ պիտի խորհեցնէր ընթերցողը ու պիտի գայթակղեցնէր զայն: Այս արուեստը ուրեմն, այսքան թերի ու այսքան կատարեալ միանգամայն, հրաշքով, հնարքով կամ աշխատութեամբ չէ որ մէջտեղ ելած կրնայ ըլլալ, այլ խոստովանինք թէ անիկա ծնունդն է տաղանդի մը որ կեանքի փիլիսոփայութեան դրոշմը կը կրէ, որ աղքատած է աշխարհի ունայն մոլորանքներէն ու գարշ տափակութիւններէն և որ ճանչցած է է՛ն աղին և վսեմ հորիզոնները մտաւորական աշխարհին: Քրիզանթէմի բոլոր գրուածքներուն մէջ, մարդ անկարելի է որ նշմարած չըլլայ այն անկեղծ, անսեթեւեթ, անվնաս չեղտը որ անմիջապէս գուշակել կուտայ աշխարհիկ մարդը, ապրած մարդը որ ինչպէս սալօնի մը, նոյնպէս լըրագրի մը էջերուն մէջ կը յարգէ պատշաճութեան բոլոր կերպերը և կը դորձածէ վայելչութեան բոլոր ձեւերը: Ամէնէն shoking բառը կրնայ կնոջ մը ուղղուիլ սալօնի մը մէջ, բայց ըսելուն կերպը կայ: Քրիզանթէմ գիտէ ապահովապէս այդ գաղտնիքը և այս գաղտնիքն է որ աւելցուցած է միշտ իր գրականութեան charmer:

Եւ Քրիզանթէմ գրական dandyներէն ալ չէ', ինչպէս որ չէ' սալօնի dandyներէն: Esprit իր մէջ բոյն դրած ըլլալ կը թուի: Հեզութիւնը իր շրթունքներուն ծայրը կամ աչքերուն մէջը չէ' միայն, այլ իր ամբողջ մարմնոյն մէջ կը պտտկի անիկա: Զինքը տեսած ըլլալ կամ իր մէկ յոգեւածը կարդալ միեւնոյն բանն է, երկու պարագային մէջ ալ հաճոյք կը զգայ մարդ: Ասիկա ըսելովս, թող չի կարծուի որ Քրիզանթէմ կատակերգակ մըն է լրագրին մէջ կամ փողոցը, բնաւ. անիկա ո՛չ Գօգլէնի ածիլուած շրթունքներն ունի ո՛չ ալ հոպլտի մը տաբատը, բայց դէմք մը ունի որ կը ժպտի անդադար, որ կը ծիծաղի յաւիտեան, որ կը հեզնէ միշտ: Յետոյ, այդ ժպիտը կեղծ չէ, այդ ծիծաղը արուեստական չէ, ո՛չ ալ այդ հեզանքը գոհիկ: Բոլոր ասոնք կը պատկերացնեն ուրեմն մեր աչքին հոգի մը որ կը խորշի մարդոց սին ու պտտի ունակութիւններէն, որ կը ձաղկէ անոնց ստորնաքարչ մոլութիւնները, արհամարհելի յաւակնութիւնները: Որքան դժուար է երգիծաբանին դերը, որքան ալ բարձր սակայն: Դժուար է, որովհետեւ պէտք ունի անկախ, անկաշկանդ, երեւոյթներէն չխաբուող, հնարիմաց միտքի մը. իսկ բարձր՝ անոր համար որ ուրիշներու առջև քծնիլ, ուրիշներու «ես»ը գգուել չի գիտէր: Բանաստեղծ մը կրնայ մոլորիլ և խուսկ վառել մէկու մը առջին. երգիծաբանը անգուր չէ միշտ, կը հարուածէ՝ երբ պէտք է խղճալ, կը ձաղկէ երբ պէտք է լալ: Բայց ահա՝ ճիշդ իր այս արարքներովն է որ երգիծաբանը կը հռչակուի իբր է՛ն անվնաս և խղճամիտ մարդը: Տգեղ բարքերու, բարոյական վէրքերու օբեկաթօքն է անիկա որ կը ձգտի հիմնովին բժշկելու զանոնք և յաճախ կը յաջողի ալ: Հրապարակագիր մը, որքան ալ լուրջ ըլլայ, որքան ալ աղդեցիկ ըլլայ, յաճախ իր գրչի հարուածներովը շատեր վիրաւորած է: Օրինակ, տհա Պարոնեանը որ հայ մտաւորական և ընկերական ջոջերու carica-turistec ըլլալով հանդերձ, ենթակայ եղած չէ երբեք անոնց արհամարհանքին և ատուութեան, իսկ կարոպետ Փանոսեան, կա-

տաղի ու յանդուգն հրապարակագիր, ճիշդ հակառակ բախտին արժանացած է և ղգալապէս տուժած իր ատենի մարդոց առջև։

Վերադառնալով ուրեմն Քրիզանթէմին, կրնանք ըսել անմիջապէս թէ երգիծարանութեան մէջ կարելի չէ ըզգաւել զայն Պաքոնեանի հետ։ Սա՝ ճախրանքներ ըրած է յաճախ դէպ ի բարձր հորիզոնները մտաւորականութեան և առաջին անգամ ըլլալով ինքը սովորեցուցած է մեղի կեանքի ունայնութիւններուն վրայ փոխանակելու, խընդալով, ծիծաղելով փիլիսոփայելու և խորհելու կերպերը։ Յետոյ, այս երկուքը տարբեր են նաև իրարմէ խառնուածքով, ճաշակով, ապրելու եղանակով։ Պարոնեան, Պլուտարգոսներու, Արիստոփաններու ուղղութեամբ երգիծական քիբեք ստեղծած է, իր ժամանակին նշանաւոր դէմքերը հարուածած է, անոնց հոգին մերկացնելով ու անոնց մտքի կարողութեան վրայ ծիծաղելով, մինչդեռ Քրիզանթէմ, աւելի modern, աւելի նրբացած, հետեւած է Albert Millaudներու, Willyներու, Alphonse Allaisներու և Xanroֆներունոր, պաճուճազարդ ու խաբուսիկ գրականութեան որ «սիկառէթի մը լայն ծուխին պէս կը ցնդի» ինչպէս գրած է Պալենդիէն, բայց այս ծուխը մինչեւ որ անհետանայ, մեր աչքին առջև կը պարզէ ցնորական, ծաղրական և ալլանդակ մարդապատկերներու ուրուագիծերը։— «Մարդկային canaillerieներուն մէջ բարոյական հարցերու լուծումները փնտռած է» — կ'ըսէ Էմիլ Ֆակէ իր *Propos de Théâtre* գիրքին մէջ Մօլիէրի վրայ խօսած ատեն։ Առանց բաղդատութեան, չենք կրնար արդեօք միեւնոյն բանը ըսել Քրիզանթէմի համար ալ որ իր «սիկառէթի ծուխին պէս խաբուսիկ» գրականութեան մէջ կըրցած է յաճախ խտացնել բարոյական դասեր առանց բարոյախօսի ծանր վերաբերուն հազամ կամ քարոզիչի մը շողարձակ վեղարը դուրս տաւ ըլլալու։ Բայց անոնցմէ դուրս, «Շոգմոգ Մտածումներ»ու հեղինակը կը ներկայանայ իմ աչքիս իբր պուտապական մը որ կը սովորեցնէ մեղի թէ ամէն բան աշխարհիս մէջ պատրանք է և երեւութական խաբկանք։

Եւ թէ պէտք է կեանքէն օգուտ քաղել, առանց խաբուելու և պատրուելու, կարելի եղածին չափ զուարճաւորով և կատակարանելով։

* *

Խորագիրս կը ցուցնէ արդէն թէ ինչ որ կրցայ ըսել, ինչ որ կրցայ արտայայտել Քրիզանթէմի վրայ, համառօտ մէկ ամփոփումն է այն ցիրուցան տպաւորութիւններուն զորս ունեցած եմ այսքան երկար տարիներէ ի վեր շինքը կարդալով։ Կրնայի իր ամբողջ արտադրութիւնները — և դրական կարեւոր *bagage* մը կրնան նկատուիլ այս արտադրութիւնները — վերստին կարդալ, խնամով ուսումնասիրել զանոնք, անոնց մէջ թերութիւններ փնտռել, ի վեր հանել անոնց դրական արժէքը և այլն, բայց չըրի այս բանը և չէի կրնար ընել, քանի որ Քրիզանթէմ ամբողջական գործ մը չէ հեղինակած ցայսօր, ինչ որ կըսպասուէր չիտակը իրմէ։ Բայց եթէ իւր փարոս մը չէ փայլած ինքը, կրնանք իբր մէյմէկ մտքի լուսաւոր կէտեր նկատել բոլոր այն պղտիկ գրութիւնները զորս ասդին անդին ցրուած է տարիներէ ի վեր, գրեթէ ամէն լրագրի մէջ, Պօլիս, Իզմիր։ Դեռ կը յիշեմ այն տարիները երբ ինքը, գրական ծանօթ և *distingué* դէմքերու մտերմութեան մէջ, կ'արտադրէր մտքի տարօրինակ թարմութեամբ մը։ Երբեմն Արեւելի խմբագրատան մէջ կը հանդիպէի իրեն և հոն է որ ամենէն աւելի կը փնտռուէր ինքը այն ատեն, իր *plaisant* աղու կատակներուն համար, իր «համակրելի աշխատակցի» ընկերականութեանը համար։ Անկէ հտքը, մէկ քանի տարիներ առիթը չունեցանք կարդալու զինքը և երբ երեք տարի առաջ Իզմիրի գրական հրապարակին վրայ լսեցինք իր վերերեւումը, անակնկալը կատարեալ եղաւ։ Ինքը անշուշտ փոխուած է հիմա շատ մը պարագաներու մէջ, ճերմակ մազերը անշուշտ աւելի շատցած են թուով իր զխուս վրայ, բայց չգիտեմ ինչու, իր գրականութիւնը անփոփոխ մնացած կը թուի ինձի, նոյն խանդը, նոյն *ingénieux* գիւտերը կան անոր մէջ։ Այս անփոփոխ վիճակը իր գրականու-

թեան, կ'ապացուցանէ թէ Քրիզանթէմ ուրիշներու թեւադուրթեանց ենթակայ գրող մը չէ. ինքը կը շարունակէ քալել այն ծաղկաւէտ ճամբէն ուր մտած է անգամ մը. ուրիշ ճամբայ մը բռնելու պէտք չունի: Եւ յետոյ, Քրիզանթէմ չէ պահանջած երբեք որ ամէն ոք զօռով ճաշակէ իր գրածները. իրեն կը բաւեն այն *affinè* ընթերցողները որոնք լէգէոն կը կազմեն այսօր: Արդէն չըսի որ Քրիզանթէմի գրական սեռը օւռանժաթի կը նմանցնեմ. է՛հ ուրեմն, այդ հաճելի խմուածքով հեղուկը որուն մէջ սառ ալ կայ, կրնայ յարմարիլ անոնց միայն որ զօրաւոր ստամոքս եւ առողջ ակումբներ ունին. փտտած ակումբներու եւ հիւանդ ստամոքսներու մեծագէտ կը չլսասէ «Քրիզանթէմեան Գրականութիւն»ը:

SOUVERAIN.

ՀԱՏՈՒԱԾԻԿՆԵՐ

Կը լսեմ որ էութեանս մէջ կը հեծէ անոյշ սարսուռը սէրերուն, որոնք պիտի ծաղկին ցաւոտ սրտիս մէջ՝ ուր յիշատակներու փոշին կը քնանայ՝ հառաչանքի մեղամաղձիկ օրօրներուն տակ:

Ու կը փախչիմ, չեմ գիտեր թէ ինչէ՛, թերեւս իմ հոգիէս, իմ ցաւատանջ հոգիէս, ուր Տառապանքը լոկ երգեց երգը անծանօթ ու խորին տրտմութեան՝ որ իմ էութեանս մէջ կ'ապրի:

Յորդառատ ծուխ մը կը պլլուի Տենչանքիս խորտակող բոցին, որ սուտակային գօտիի մը պէս կ'երկարի:

Անծանօթ չիցուհիներու չարագուշակ ձեռքեր՝ մշուշի խոպոպներով կ'աշնաներփեն երազագոյն հոգիս, որ կը թուի թէ կ'անէա-նայ յամբօրէն, յամբօրէն: Մահերգի ուր-ուային թախծութիւններ, ջախջախող ու անբուժելի, հեռուններէն կը նուագեն ինծի մահը ծաղկափաղով: «Մեռաւ ան, ո՛վ «Դուն, անկերպապէս տարփաւոր, միամիտ «տղայ, ու անկասկած: Թափառիկ ու դիւ-«բարեկ ստուերայնութիւն, որ կրցար քու

«յոյղերդ պտտցնել խաւարչտին ու անել բա-«ւաւորութիւն եղերքը, խեղդող պարապութեան «մէջ, որ ծնրադրած կը թուէր քեզի՝ զգա-«ցումին ուժգնութեան առջև: Բայց, ան-«խորհուրդ, գիացի՛ր մեծ խորհուրդը ու «կրկնէ՛ մեղի հետ. «Քնացա՛ւ, — ու գուցէ «ընդմիտ չարթննա՛յ. անիկա իր անդոյու-«թիւնը կ'ապրի հիմակ, ա՛հ, իր անգոյու-«թիւնը...»:

Ալեականերու ընդհատ ընդհատ շաշող սրս-փունքները որոնք աւաղին վրայ կը մեռնին դողանար, ու ծովափին խուսափուկ լոյսե-րուն ծիրանի երանգաւորումները՝ որոնք կը թօշնին յանկարծ՝ տարտամ գոյներու աղօտ ճաճանչումներ ու թերի լուսաթապաւններու երազունակ գիծեր սփռելով դորը ծովախոր-շին վրայ, կը թափանցեն հոգւոյս մէջ յաւի-տեանկան գաղափարը խուսափուկ Գոյու-թեան ու մահագուշակ անդորրութիւններուն:

Ա՛հ, լուսնային անհուն, կապոյտ, մե-տաքսէ քաղցրութիւնները... փախչող վեր-դովմունքներու սպիտակ երազայնութիւնը... ծովուն աղաբոյր շունչը՝ որ խորունկ զգա-ցողութեան մը պէս կըստուարանայ ու կը ճնշէ տակաւ հոգիիս:

Մահուան անդնային զգայնութիւն մը՝ մահագոյն մտածութեանց միապաղաղութեան մէջ:

Եւ մահական վախեր՝ որոնք կը մագլցին սառ հանդարտութիւններու մէջ, նուագի մը պէս որ կը թմրեցնէ՛, հեշտին...

Բայց չի՛ լսեր երբեք աղաղակը հոգւոյս որ դէպի կեանք կը վաղէ, խանդավառ ու բաղձալից...

ՇԱԽԱՍՏ ԾԻԱԾԱՆ

ՎՊՆՆ Պատրիարքարան հասած գիրեր՝ ուշադրութիւն կը հրաւիրեն երտման վար-ժարանին վրայ, որ նիւթական դժուարին կացութեան մը մէջ կը գտուի: մատակա-րարութենէն 300 ոսկի եւ դպրոցի շինու-թենէն ալ 150 ոսկի բաց ունենալով: Մայ-րաքաղաքս հաստատուած Վանեցի աղգա-յիններէն կըսպասուի որ օժանդակութեան ձեռք կարկառեն այդ կրթական հաստա-տութեան:



ՅՈՒԳ-ՄՈՒԳ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԵՐԲ ՄԻՆՁԵՒ ԱՌՏՈՒ ԲՈՒՆԴ ՉՏԱՆԻՐ

Ոչ խղճիս վրայ բեռ մը և ոչ ալ ստա-
մոքսիս, բայց սակայն մինչև առտու աչքերս
չեմ գոցած երէկ գիշեր:

Մհ, զարհուրելի՛, անիծեա՛լ գիշերը...
Կերեւակայէք անշուշտ թէ ի՞նչ պուլտօկի
տրամադրութիւններով դուրս ցատկած եմ
անկողնէս այս առտու. հրեշտակներուն ամե-
նէն հրեշտակին հետ կ'ախ պիտի ընէի՛ եթէ
այս պահուս դիմացս գտնուէր:

Ահա ի՞նչ հոգեւոր, մտային և մարմնա-
կան տրամադրութեամբ գրասեղանիս առջև
կ'անցնիմ, խոստացած յօդուածս հասցնելու
համար Մասիսին:

Գիշեր մը ամբողջ, մինչև առտու, ան-
կողինիդ մէջ չի կրնալ քնանալու տառա-
պանքէն աւելի անոնի, աւելի տգեղ, ա-
ւելի անհաճօյ բան չեմ գիտեր ես:

Աշխարհիս վրայ երեք դժուար բան կայ:
Թաղական Խորհուրդէ՛ մը առնելիք ու-
նենալ, մէկ. հայ աղջկան մը հետ ֆլիրթել,
երկուք. և Հաճի Տափուտի շոգենաւերով
ճամբորդել, երեք: Բայց ասոնք բան մը չեն՝
գիշեր մը անքուն մնալուն քով:

Կարծես բոլոր սատանաները, բոլոր կա-
րիճները, բոլոր տունը մնացած աղջիկները
rendez-vous տուած են անկողնիդ մէջ:
Բարձէդ կրակ կ'ելլէ, սաւաններէդ ելեկտը-
րականութիւն և հազարաւոր մը ջիւններ
մարմնոյդ մէջ կը մտնեն ու բիւրաւոր մեղու-
ներ միսերդ կը ծախկեն:

Չախ կողմիդ վրայ կը դառնաս՝ Երու-
սաղէմի հաշիւները միտդ կուգան, աջ
թեւիդ վրայ կը պսակիս և տեսնել չուզած
մէկ աղջիկիդ պատկերը աչքիդ առջև կը
սնկուի:

Պղտիկ, բարակ դիւսու ցաւ մը. մարմինդ
կը թմրի, բազկերակդ 5000ի կը բարձրանայ,
բերնիդ մէջ քինինի համ մը, աչքերդ կ'այ-
րին, կռնակդ կը պաղի, սիրտդ թաք-թաք

կը զարնէ և թափած քրտինքովդ պղտիկ
լճակ մը կրնաս չինել:

Թեւդ բարձիդ տակ կը դնես, չըլլար.
բարձը թեւիդ տակ կը դնես, նորէն չըլլար.
Կատաղութենէդ դուրս կը նետես անկողնէդ
և վայրկեան մը վերջը կիջնաս կառնես:

Ժամերը չեն քալեր, գիշերը բեռնակրի
մը պէս կը քնանայ, աքաղաղները կը պա-
պանձին և գիշերապահը կը հազայ:

Գաւաթ մը ջուր, երկու սիկառէթ, դար-
ման մը չեն բերել քու տառապանքիդ:

Մահճակալդ մինչև հիմայ, երբեմնի հայ
հարսերուն պէս, մունջ կը բռնէր, այս գիշեր
շարունակ կը ճգճզայ, Մատամ Շմիտէն toi-
lette մը պահանջող արդի կիներուն նման:

Աչքերդ կը գոցես ու կը բանաս, ճակատդ
կը չիբես, կը քերոււրտիս, կը հազաս, ա՛խ,
օ՜Ֆ, ոչինչ: Մոմդ կը վառես, լաւագոյն
արդիւնք մը ձեռք չես անցուներ սակայն:

Դատապարտուած ես չի քնանալու՝ լը-
մընցա՛ւ:

Ճարահատ և սրտնեղութենէդ լլկուած՝
յիշատակներուդ տուփը կը բանաս:

Դպրոցականի կեանքէդ յիշատակ մը միտ-
քըդ կ'ոգայ. քսան տարի առաջ մեռած մէկ
մօրաքոյրդ և Պետրոս աղային կարմիր մա-
ղերով աղջիկը:

Միտքդ կուգան հետզհետէ՝ տղայութեա-
նդդ, առաջին անգամ ժամը մօմ բռնելդ,
անգամ մը ձիէ վար իյնալդ և հեղ մը Ալէմ
Տաղի հովառսայութիւն ընելդ:

Երկու մտածումի մէջտեղ. հինդ տող
Միւսէ կ'արտասանես, Barbier de Seville-ին
cavatineը կը մոլտաս և կամ «Առաւօտ լու-
սոյ»էն տուն մը կը ծամես:

Յանկարծ միտքդ կուգան հինգ տարի ա-
ռաջուան երկրաշարժը, Բալիօրիյին սրունք-
ները, Ֆրոսօին մազերը, Ռէյմօնտին շապիկ-
ները և Ագապիին՝... ձախ ուսին վրայ ու-
նեցած պէնիք:

Եւ սակայն քունդ չի տանիր նորէն:

Քսան տարուան տաժանակիր աշխատու-
թեան համը՝ գիշերուան մը մէջ առնելու
միակ միջոցն է քնհատութիւնը:

Այս անգամ կռնակիդ վրայ կերկըննաս և

վերմակը կը նետես վրայէդ։ Այդ դիրքին մէջն ալ պարտքերդ միտքդ կուգան, առնելիքներդ, մաղազախն քիտան, Հռոմփսի մային անցեալ գիշերուան ըսած խօսքը, Արեւեանին ամուսնաթողութեան խնդիրը, միտքդ կուգայ գարնան սկսիլը, չապիկիդ փրթած կոծակը և տասը տարի առաջուան տանդ սպասուհին սըխտոր հոտող բերանը։

Մեծ հայրդ միտքդ կուգայ և իր կապոյտ թաշկինակը որ պզտիկ պարտէզի մը չափ մեծ էր, կը յիշես անգամ մը թիֆոյէ բռնուելիդ և վերյուշումը կունենաս թէ ամառ գիշեր մը Նոյեմբին *déclaration* ըրած էիր սանդուղներուն տակը։

Որովհետեւ քունդ չի տանիր, երեւակայութիւնդ բարակ բարակ կը գործէ։

Քեզի անանկ կուգայ որ մազերդ թել թել կը թափին կոր և ակռաներդ հատիկ հատիկ։ Կարգուած չըլլալուդ կը զզջաս՝ երբ աջ կողմիդ վրայ պառկած ես և ամուրի մնալ կ'ուխտես՝ ձախ կողմդ դառնալուդ։

Կըսկսիս հաշուել տարիքդ, ունեցած օձիքներդ և կորսնցուցած թաշկինակներդ։

Անցեալին մէջ ունեցած սէրերդ միտքդ կուգան և կ'անիծես բոլոր ցեղը կիներուն։

Քունդ չի տանիր կոր, խեղճ մարդ, պիտի խնդենաս։

Ժամը մէկ կը զարնէ, թունդ կ'ելլայ հոգիդ երբ կը մտածես թէ դեռ տասնըվեց ժամեր ունիս անցնելիք։

Դոնէ ամուսնացած ըլլալիդ, եթէ ոչ ուրիշ բան՝ դոնէ կ'ուր մը կընէիր կնկանդ հետ և ժամանակը կ'անցնէր։ *Souffrance pour souffrance*, քսան տարի ամուսնացած ըլլալը՝ նորէն գիշեր մը անքուն անցունելէ առէկ է։

Երթայ երթայ և չի գայ երէկուան գիշերը։ Երէկ գիշեր Քրիստոս աւելի հանգիստ էր իր խաչին վրայ քան ես անկողնիս մէջ։

Իբր թէ այս ամէնը բաւական չըլլար, թաղեցիներուն Զատիկուան համար առած բոլոր ոչխարները անդադար, անհատնում կը մային։

Դրիչը ձեռքս և թուղթը առջիս, տակաւին չեմ գիտեր թէ ինչ պիտի գրեմ։

Թանմիզեի ըլլալը գրագէտ ըլլալէն առէկ է. փոխանակ միտքդ ծեծելու, խահլէն կը ծեծես և դործդ գործ է։

Յիշատակներու այն լաբիրինթոսէն որուն մէջ տապալակեցայ գիշերն ի բուն, երկու բան մտքիս մէջ տպաւորուած մնացին։ Առաջին անգամ՝ երկայն բանթաւն հագնիլս և առաջին անգամ աղջիկ մը համբուրելս։

Թոյլ կուտա՞ք որ ասոնք գրի առնեմ։ Ձեզի համար յօդուած մը պէտք է և ինծի համար՝ նիւթ մը։ Երկուքը միասին կը ներկայանան, ի՞նչ բախտ։

Ինչ տարու կայի չի կայի, երկայն բանթաւնով *marin* քօսթիւմ մը հագցուցին ինծի։

Ձեռքերս գրպաններուս մէջ, գդակս սանկ ծռու դրուած, անանկ մեծութիւն մը, անանկ առնական ոյժ մը, անանկ զօրութիւն մը զգացի ներսիդիս, որ եթէ *saisais* թող տար, Մոն Պլանի դագաթը պիտի հանէի բոլոր զրահաւորները Հէլլէտական նաւատորմիդին։

Առաջին երկայն բանթաւնը, առնական նոթեան առաջին նշանն է այդ, թուական մը, եղելութիւն մը զոր մարդս երբեք չի մոռնար։

Մարդ ըլլալդ կըզգաս երբ առաջին անգամ երկայն բանթաւն մը կ'անցնես... սրունքներուդ։

Տղայ չես այլևս, քալելու տարրեր եղանակ մը կը փնտռես, հայելին նայած ատենդ կը զարմանաս թէ ինչո՞ւ պիտի այդքան կ'ուշանան բուսնելու, բարեկամ լակոտնեւորդ բարձրէն կը նայիս, բարեւդ կը կտրես և դրացի աղջիկներուն ծռու ծռու կը նայիս։

Առաջին երկայն բանթաւնը... , ասիկայ այն է աղոց համար ինչ որ է քօսէն՝ աղջիկներուն . առաջին երկայն բանթաւնը, ասիկայ այն աղղեցութիւնը կ'ընէ մեր վրայ, ինչ որ կ'ընէ առջինեկ զաւակ մը իր հօրը վրայ։

Ինչ որ է երկայն բանթաւնը աղուն, այն է առաջին առաջնորդութիւնը վարդապետին, առաջին *galon*ը զինուորականին, առաջին համբոյրը չափահաս աղջկան, և առաջին թաղականութիւնը խույուսմի Ագրիպասին։

Իմ առաջին բանթալոնս սակայն . . . ա-
սոր պատմութիւնը իրեն պէս երկայն է և
յարմար չեմ դատեր ասանկ սուրբ օրերուն
մէջ ընել դայն ձեզի, վախճալով որ մի'
գուցէ մեղք մը գործեմ ձեր մաքուր հոգի-
ները պղտորելով :

Առաջին մեղքս չպիտի ըլլայ ասիկայ,
գիտեմ. մեղք մը աւելի՝ մեղք մը պակաս,
հաւասարակշռութիւնը չի կորսուիր և յետոյ
մեղայ մը բաւական է քաւելու համար միակ
մեղք մը ինչպէս անոր տասը հատը :

Մեղքի, խոստովանութեան վրայ խօսած
միջոցիս, պզտիկ anecdote մը միտքս կուգայ
զոր պատմելու կը մղուիմ, քանի որ շաբա-
թը քրիստոնէական է և ձեր ներողութիւնը
ստանալ այնքան դիւրին :

Ֆրանսայի գեղերէն մէկուն երէցը իրի-
կուն մը ճաշի հրաւիրուած էր մերձակայ
դղեակին տիրուհիէն :

Ժամը յին պէտք էր հոն գտնուէր :

Պատուական մարդուկը որոշեալ ժամէն
քառորդ մը առաջ վերարկուն կ'առնէ և այն
միջոցին որ մատուռին դուռը կղպելու վրայ
էր, գեղանի կին մը կը ներկայանայ և փա-
փաք կը յայտնէ խոստովանուելու :

— Վաղը առտու եկուր, աղջիկս, կը
յանձնարարէ երէցը :

— Կարելի չէ, սիրելի Հայր, պէտք է որ
խոստովանուիմ, որովհետեւ մեղքերս զիս կը
տանջեն և ձեր թողութեանը պէտք ունիմ :

Կրկին կը բանայ դուռը, ներս կ'առնէ
կինը և դրան ետին ծունկ չոքել տալով :

— Ըսէ՛ տեսնեմ, կ'ըսէ, բարկութեամբ :
Խաչ մը կը հանէ կինը և պզտիկ աղօթք
մը կը մոլտայ :

— Ի՞նչ մեղք ունիս, աղջիկս, չըսե՛ս :

— Հայր իմ, մեղքս ծանր է . . .

— Մեր Տէրը կը ներէ . . .

— Դեմ ծանր է . . .

— Աստուած թողութիւն կուտայ :

— Ձէք գիտեր որքա՛ն ծանր է . . .

— Մարդիկ Լըռնին կը մոլորին . բայց
վերջապէս ըսէք ըսելիքնիդ, ժամանակ չու-
նիմ ըսի ձեզի :

— Ձեմ համարձակիր . . .

— Քաջութիւն, աղջիկս, ըսէ՛ք :

— Երիտասարդ մը որ երկար ժամանակէ
ի վեր ետիս ինկած էր, վերջապէս . . . :

— Հասկցայ, բայց չո՛ւտ ըրէք, ժամանակ
չի մնաց :

— Տկարութիւնը ունեցայ հայր իմ . . . :
պագնուելու :

— Լաւ, լաւ, քանի՛ հեղ . . .

— Եօթը :

— Այս գիշեր քառասուն անգամ «Զըղ-
ջում»ը կարդացէք և Աստուած թողութիւն
չնորհէ :

Կինը մեկնելուն պէս, երէցը կը քաշէ
դուռը. բայց այն պահուն որ բանալին պիտի
դարձնէր՝ սուրիշ կին մը հեւալով իրեն կը
մօտենայ .

— Հայր իմ, հայր իմ, ձեզի պէտք ու-
նիմ, կեցէ՛ք :

Եօթին հինգ կար .

— Ձեմ կրնար, կերթամ կոր, վաղը առ-
տու :

— Անկարելի՛ է, Հայր, պէտք է խոստո-
վանուիմ :

— Զըլլա՛ր, ըսի, վաղը առտու :

— Յանո՛ւն Աստուծոյ :

— Ո՛ւՖ, Աստուած պէ՛լադ չի տայ :

Դուռը կը բանայ չի բանար, կը հարցնէ
կնկանը .

— Անշուշտ դուն ալ մարդ սիրեցիր, ա-
նանկ չէ՞ :

— Մոլորումի վայրկեանի մը մէջ համ-
բուրուեցայ :

— Հասկցայ . մինակ, քա՛նի հեղ, ըսէ՛ :

— Զորս :

Երէցը կը շուարի : Եօթը անգամին համար
40 աղօթք պատուիրած էր հապա չորսի՞ն :

— Աղջիկս, ժամանակ չունիմ, երեք ա՛ն-
գամ ևս մոլորէ, 40 անգամ «Զըլջում»ը
կարդա՛ և Աստուած թողութիւն չնորհէ :

Ասոր վրայ՝ բանթալոնիս պատմութիւնը
պիտի ընէի ձեզի, բայց յօդուածս չատ եր-
կարեցաւ և գիտեմ թէ ժամ պիտի երթաք :

Առաջին բանթալոնս և առաջին պաշիկս
Զատիկէն ետքը : Զըլլա՛ր :

ՔՐԻՉԱՆԻՍ

Կ Է Ս — Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն

ՀԻՒԱՆԴԻՆ ՈՒՏԵԼԻՔԸ

Հիւանդութեան յաջող դարմանումին համար՝ մեծ կարեւորութիւն ունի հիւանդին ուտելիքը։ Անկարելի է անթեքելի կանոններ գծել՝ անխորի ամէն հիւանդի համար միանգամայն և ըսել թէ՛ այս կամ այն տեսակ ճաշացուցակներ գործածուելու են անոնց ամենուն համար առ հասարակ։ Նկատի առնուելիք չափ բաներ կան։ Կէ՛տք է՝ զոր օրինակ՝ գիտնալ հիւանդութեան բնութիւնը, գիտնալնաւ ունկառողութեան առնել հիւանդին տարիքը և անոր հին սովորութիւնները, եւ սակայն, տակաւին կրնանք օգտուիլ կարգ մը ընդհանուր սկզբունքներէ, որոնց վրայ դադափար ունենալու են հիւանդներն և մասնաւոր դանոնք խնամողները։

Մարդ՝ երբ հիւանդնալով անկողին կ'ընայ՝ հո'ն կը վայելէ հանգիստ և չըջապատուած է հաւասարաչափ բարեխառնութեամբ մը։ Մինչ, առաջ՝ քաջառողջ վիճակին մէջ, շարունակ տեղ փոխելով ու գործելով՝ յայտնի է թէ՛ ո'չ հանգիստ կրնար ունենալ և ո'չ ալ հիմակուան միջավայրը։ Ուստի և իր՝ այսինքն հիւանդին մասնային գործունէութեան վատնումը քիչ է համեմատաբար, և պակաս է նոյն ատեն իր մարմնական ջերմութեան սպառումը։ Ուստի և քիչ սնունդի պէտք ունի՝ բազդատմամբ իր առաջուան գործունէայ վիճակին։

Անկողինին մէջ պառկող հիւանդը՝ հանգիստ վայելելուն՝ պակաս սնունդի պէտք ունի դարձեալ, որովհետեւ իր արեան շրջանը և իր ստամոքսին ու աղիքներուն շարժումները նուազ ուժգին են։ հետեւաբար իր մարսողութիւնն ալ կ'ըլլայ նուազ զօրաւոր։ Ասկէ դիւրին է հեռացնել թէ՛ հիւանդին ուտելիքն ալ ըլլալու է դիւրամարս։ Այս երկրորդ կէտը առաջինին քով դնելով՝ անմիջապէս պիտի տեսնուի թէ՛ ի'նչ է հիւանդը սնուցանելու, կերակրելու բանաւոր կերպը։

Ժողովուրդին մէջ առհասարակ տիրող

գաղափարը ա'յն է թէ՛ հիւանդ մը, ու մասնաւոր պառկող հիւանդ մը կերակրելու է առատօրէն ու անխնայ կերպով, որպէսզի չուտով ոտքի ելլէ։ Եւ արդարեւ ա'յդ կերպը պիտի յանձնարարուէր ո' և է անձէ, եթէ սակայն չի գիտնայինք թէ՛ ատոր հակառակն է իրողութիւնը։

Մարգկային մարմինը երբեմն նմանցուած է շոգեգործի մը, ի'նչ որ շատ յարմար նմանութիւն մըն է մանաւոր միտքս բացատրելու համար։ Երբ շոգեգործին՝ կատարելիք մասնաւոր և մեծ գործ մը ունի՝ նոյն չափով հարկ է անոր տալ վառելիք։ Բայց երբ ի'նչ և է պատճառով կը դադրի կամ կը կաղայ իր առաջուան պաշտօնը կատարելէ, ա'լ այն ատեն պէտք չիկայ առաջուան չափ վառելիք նետել տակը։ Քիչ մը բան կը բաւէ չի պաղեցնել գործիքը, և թո'ղ չի տալ որ բոլորովին կայնին իր շարժումները։ Ու ասիկա չափ ճշմարիտ է հիւանդին մարմինին համար։ Առաջուան, առողջութեան գործը չըսպասուի իրմէ։ Ինք ալ սպասելու չէ առաջուան սնունդը։

Մանուանդ երբ փոխելու յամառ միտում մը կը տեսնուի հիւանդին վրայ, կամ ստամոքսային ո' և է տկարութիւն, այն ատեն բոլորովին տխմարութիւն է անդուշաբար և շարունակաբար ուտելիք թխմել հիւանդին բերանն ի վար։ Ինչե'ր կը քաշէ խեղճ ստամոքսը՝ անխելք գլխին երեսէն։ Դիւրին է հասկնալ թէ՛ ստամոքսին մէջ մտած կերակուրին քանակէն բնաւ չօգտուի մարմինը, եթէ ա'յդ կերակուրը կլլուելէն քանի մը բոպէ վերջը եղածին պէս կը փոխուի։ Այդ կերակուրին ծծուած մասն է միայն որ մարմինին կը ծառայէ իրրեւ սնունդ։ Եւ ուրեմն պարապ տեղը չարչարել է հիւանդը, երբ ամէն կերակուրը կլլուելուն յաջորդող փոխուելին՝ նորէն կը թախանձուի կամ կը բռնադատուի բան մը ուտել։ Բանաւոր ընթացքը պիտի ըլլայ, պահ մը՝ և ի հարկին ժամերով ու օրերով հանգիստ ձգել այդ զրգուռած յուզուած գործարանը, ստամոքսը։ Ասանկ չենք վարուիլ ուրիշ պարագաներու տակ։ Ինչո'ւ նոյնը չի գործադրուի

նաև ստամոքսին համար : Եւ եթէ անհրա-
ժեշտ նկատուի անպատճառ մարմինին մէջ
անունդ մտցնել՝ ատոր համար կայ ուրիշ կերպ
մըն ալ, պատշաճ ձևերու տակ կրնայ սը-
նունդը մարմինին մէջ մտցուիլ մարսողական
խողովակին հակառակ կողմէն, դրեխի լի-
ջոցով :

Եւ նոյն իսկ եթէ հիւանդը չի փսխէ իրեն
տրուած կերակուրը՝ ատիկա ալ բաւական
ապացոյց մը չէ՝ թէ իրապէս կ'օգտուի անկէ :
Կերակուրը կրնայ ամբողջ մարսողական խո-
ղովակէն ճամբորդել և սովորական եղանակ-
ով ալ դուրս ելլել մարմինէն, ու տակաւին
մազի չափ սննդարարութիւն չունենալ մար-
դուն համար : Այս կէտն ալ կ'արժէ աղէկ
ըմբռնել : Կրկնենք անգամ մըն ալ, խնդիրը
այն չէ թէ ինչքան անունդ ներմուծած ենք
մեր մարմինին մէջ, հապա թէ՝ ինչ չափով
օգտուած է մեր մարմինը՝ իր մէջէն անցնող
կամ ճամբորդող այդ կերակուրէն : Եթէ մեր
մարմինը չիւրացնէր իր մէջէն անցած անուն-
դը, ա'յն ատեն կատարած կ'ըլլար միայն
բեռնակրի կրաւորական դերը, և այս ալ
հարկաւ ո'չ առանց յոգնութեան և անպէտ
աշխատութեան :

Հիւանդներուն և տկար մարսողութիւն
ունեցողներուն սովորաբար հեղուկ կերակուր
կը յանձնարարուի ձիւդ այս ըմբռնումով թէ
կերակուրը հեղուկ վիճակի մէջ մատուցուե-
լով մարսողական գործարաններուն՝ չափով
մը զիւրացուցած կ'ըլլանք՝ անոնց գործը,
թեթեւցուցած՝ անոնց տալիք աշխատու-
թիւնը : Այս մասին ալ ժողովուրդին կար-
ծիքը սրբագրութեան կարօտ է : Կը հանդի-
պինք շարունակ չափազանց փափկասիրտ
հիւանդապահներու, որոնք չեն կրնար հա-
մողուիլ թէ առանց կարծր կերակուրի՝ հի-
ւանդը կրնայ հիանալի կերպով անունդ քա-
ղել իրեն արուածներէն : Կաթը ու մսի ջուրը
բանի տեղ չեն դրուիր, սննդարար չեն նը-
կատուիր մինչև որ քանի մը պատառ հաց
կամ կոշտ մը միս ալ տրուի անոնց հետ : Ա-
նօրինակ բան մը չէ բժիշկին համար տեսնել
որ իր մէկ հիւանդը յանկարծ ծանրանայ, ո-
րովհետև հիւանդին տէրերը պէտք տեսնու
ն

իրենց հիւանդին տալ կարծր կերակուր, զոր
արդիւած էր բժիշկը, գիտնալով ատկէ ծա-
ղելիք հետեւութիւնը :

Հասկցուելու է ուրեմն թէ՝ իրրեւ ընդ-
հանուր կանոն՝ հիւանդը առողջին չափ սը-
նունդի պէտք չունի, վերը յիշուած պատ-
ճառներով. և սակայն պէտք է չի մոռնալ
թէ հիւանդն ալ կերակուրելու է կանոնաւո-
րապէս և ճաշերու մէջտեղի միջոցն ալ ա-
ւելի կարճ ըլլալու է : Կարեւոր է մանաւանդ
հիւծիչ հիւանդութիւններու պարագային՝
գիշերն իսկ ուտելիք տալ հիւանդին, կամ
գէթ առտուն կանուխ՝ երբ կենսականու-
թիւնը իջած կ'ըլլայ : Ծաշերու մէջտեղը
ձգուած համեմատապէս պակաս հեռաւորու-
թիւնը ինքնին կը հետեւի հիւանդներու քիչ
կերակուր տալու սկզբունքէն : Հիւանդին
տկար ուժասպառ մարսողական գործարան-
ները կրնան անկարող ըլլալ յաղթելու կամ
մարսելու խոշոր ճաշ մը, մինչդեռ իրենց
փոքր ուժը կը բաւէ փոքրիկ ճաշի մը գործը
լնցնելու : Անոնք՝ իրենց այդ գործը կատա-
րելէ վերջ, կրնան նորէն և շուտով պատ-
րաստ ըլլալ գալիքին :

Օրական երեք անգամ ճաշելու սովորու-
թիւնը աղէկ է առողջին համար. կը կար-
ծեմ սակայն թէ հիւանդին համար աղէկ
կ'ըլլայ այդ թիւը բարձրացնել չորսի և նոյն
իսկ հինգի : Մանաւանդ կ'արժէ ուշադրու-
թիւն դարձնել պառկելէ անմիջապէս առաջ
հիւանդին բան մը տրուելու օգտակարու-
թեան : Դիտած եմ թէ Լոնտոնեան հիւանդա-
նոցներու մէջ իրիկունը չատ ուշ, պառկելէ
անմիջապէս առաջ, հիւսնդներուն կը տրուի
չնորհքով աման մը կաթ՝ երբեմն ալ մէջը
հաց փշրուած, և նոյնը կը տրուի նաև հի-
ւանդանոցներու ներքին բժիշկներուն և օգ-
նակա'ներուն՝ կէս գիշերէն ժամ մը առաջ :
Ու ասիկա արդարեւ բանաւոր կը թուի, նը-
կատելով որ իրիկուան և առտուան ճաշերուն
մէջտեղը գէթ տասը ժամի միջոց մը կայ :
Մէկ կողմ ձգելով սակայն առողջներուն
խնդիրը, կը հաւատամ թէ՝ գիշերային ճաշը
անհրաժեշտ է հիւանդներուն համար :

Հիւանդին գլխաւոր կերակուրը պէտք է

ըլլայ կաթ: Երբեմն, երբ բժիշկը կաթ կը
յանձնարարէ հոժկու մարդու մը, անանկ
կը կարծուի շուրջիններէն թէ՛ կաթը մա-
նուկներու համար աղուոր կերակուր մըն է,
բայց անյարմար՝ յաղթակազմ անձի մը: Ա-
սիկա տղայական դիտողութիւն մըն է հար-
կաւ: Կաթը կատարեալ կերակուր մըն է. և
մեծ հիւանդներու ալ կրնայ տրուիլ առատ
չափով: Միայն երբ հիւանդի մը աղիքները
արդէն թուլութեան հակամէտ են, կրնայ
ըլլալ որ հեղուկ կերակուր մը՝ ինչպէս է
կաթը՝ աւելի թուլութիւն պատճառէ: Ասանկ
պարագաներու տակ, պէտք չէ իսկոյն հրա-
ժարիլ կաթի գործածութենէն, քանի որ
կաթը կրնանք տալ կրաջութի հետ խառնե-
լով: Եթէ հիւանդը պնդութեան ենթակայ
է, այն ատեն ալ կրնայ խառնուիլ անուշի
մը դգալ սօտա (պիքառապօնաք օր սուս) կէս
օխա կաթի հետ:

Անձնապէս՝ միշտ հաւտացող մը եղած
եմ մածունին, և քանի որ վերջերս Բաս-
թէօռեան Հաստատութեան կողմէ ևս ջեր-
մապէս կը յանձնարարուի մածունը՝ տրուե-
լու է հիւանդներուն կաթին հետ և նոյն իսկ
կաթին տեղ, երբ այս վերջինը ինչ և է
պատճառով անհաճոյ կ'երևի հիւանդին:

Միսի ջուրին վրայ երկարօրէն խօսիլ
չարժեք, ամէն մարդ գիտէ անոր պատրաս-
տութեան եղանակը. միայն սա՛ չափը կ'ու-
ղեմ աւելցնել թէ՛ կարգ մը մասնագիտական
պատրաստութիւններէ հազարապատիկ աւելի
աննդարար ու վստահելի է մեր տուններուն
մէջ պատրաստուած միսի ջուրը: Տուփը կամ
վրայի պիտակը պիտի չըլլայ անուշտ տուողը՝
հապա մէջինը, որուն հետ ամէն կերպով
կրնայ մրցիլ մեր տուններուն մէջ պատրաս-
տուած հարազատ միսի ջուրը:

Փակելէ առաջ այս մէկ քանի պարզ դի-
տողութիւններս, անգամ մըն ալ կրկնեմ թէ՛
հիւանդը բռնի կերպով կերակրելէն օգուտ
մը չի քաղուիր: Երբ մարմինը պէտք ունե-
նայ, կը խնդրէ, և ա՛յն ատեն մեր պարտքն
է այդ խնդրանքը գոհացնել բանաւոր եղա-
նակով: Չուտելը՝ հիւանդութիւնը չէ՛ ինք-
նին. երբ հիւանդի մը սիրտը (ստամոքսը)

ո՛ր և է կերակուր չի քաշեր՝ պատճառը կայ
ատոր, և առանց այդ պատճառը վերցնելու
բռնի կերակուր տալ հիւանդին սխալ է,
ի՛նչպէս սխալ է մեքենական խանգարում
ունեցող գործիքի մը աւելի գործ տալ: Բը-
նութեան ձայնը այս պարագային՝ չա՛տ աղ-
ուոր առաջնորդ մը կրնայ ըլլալ:

ՏՈՔՅ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՍԱՌԱԾ ՍԽԲՏ

Սիրեցի ես մէկ ատեն,
էն աղւորը վարդերուն,
երազեցի լըջօրէն,
կուռք մը ընել զայն սիրուն:

էն աղւորը վարդերուն՝
Սիրամորմոք իմ սրտին
Յօղն ունեցաւ՝ իբր անհուն
Խունկ մը անուշ, երկնային:

Ու սիրարժարձ իմ սրտին,
Ծալ ծալ մէջը ծալքերուն,
Յոյզեր ծնաւ ու լըռին
Տենջերն եկան մօլորուն:

Ծալ ծալ մէջը ծալքերուն
Յոյզեր տենջերն այդ սակայն,
Բաղխած հովի մ'ալքերուն
Օր մ'ալ ցուրտէն սուռեցան...

Եւ յոյզերն այդ, տենջերն բուռն,
Ա՛լ չունեցայ այն օրէն.
Երբ երկարեմ ձեւքս՝ խուռն
Փուշեր կուգան լոկ վարդէն:

ՊԱՐԷՏ



ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ հետեւեալ Պաշտօնական Յայտարարութիւնը սրտատպեցին մեր օրաթերթերը, իրենց այսչորեքարթի թիւով. — Մարտի 30ին ես ստացայ Ն. Կ. Մեծութեան Կովկասի Փոխարքայ գնհերալ — աղիւտանտ կոմս Ի. Ի Վորոնցով — Դաշկովից հետեւեալ հեռագիրը.

«Թագաւոր Կայսրի կաթող եւ կոչված եմ կանգնելու ինձ համար սիրելի Կովկասի վարչութեան գլուխ: Իրեւ հին զինուոր, ես անհնար եմ համարում հրաժարվել պաշտօնից պատերազմական ժամանակում: Այդ բանում ինձ խրախուսում է երկրի բարեբեր զարգացման և լիակատար խաղաղացման հնարաւորութեան յոյսը: Ես համոզված եմ, որ Կովկասցիները հաւատարիմ հպատակներ են Թագաւոր Կայսրին, որի համար բոլոր տեղական ազգութիւնները հաւասարապէս մօտ և սիրելի են: Դիմում եմ բոլոր ազգաբնակչութեանց, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, գործակցելու ինձ՝ մայրենի երկրի յաջող կարգաւորման համար: Երկրում խաղաղ ճանապարհով կարգ մտնելու համար անհրաժեշտ է բոլոր հասարակական ոյժերի օգնութիւնը: Նորին Կ. Մեծութեան տուած ցուցումների համաձայն ես կը հրաւիրեմ ազգաբնակչութեան ներկայացուցիչների ժողով: Դրա մէջ մասնակցելու են ազնուականութեան, քաղաքների և գիւղական համայնքների, նոյնպէս և պրաւօսլաւնի (ռուս), հայալուսաւորչական և այլադաւան հոգեւորականութեան ներկայացուցիչները: Այդ ժողովներին կ'առաջարկվի կարծիք յայանել այն միջոցների մասին, որոնք անյապաղ անհրաժեշտ են ամէն տեսակ աւազակութիւն, կողոպուտ և անկարգութիւն վերջացնելու համար, պարզել թէ որքան պէտք է զգացվում փոփոխել երկրում աշխատանքի տեսանկան կարգը, քննել Զեւապլոնների հիմնարկութեան օրէնքների գործադրութեան հնարաւորութիւնը և նպատակայարմարութիւնը: Բացի դրանից, ես ձեռք կ'առնեմ ինձանից կախված բոլոր միջոցները՝ փութացնելու հողաբաժանումը, նոյնպէս և պարզելու պետական այն հողերի իսկական չափը

որոնք պէտք են ազգաբնակչութեան ամենակարօտ մասի բնակչութեան համար: Յարգելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ամենահնարաւոր խնդիրը՝ Հայոց Եկեղեցուն պատկանած կալուածները պետական վարչութեան տակ առնելու գործը Բարձրագոյն հրամայում է վերաքննել:

«Ես վստահ եմ որ պետական հաստատութիւնների բոլոր պաշտօնեաները կը համակվեն խորապէս, որ ներկայ ծանր ժամանակում ծայրայեղ կերպով անհրաժեշտ է խզմատաբար լարել իր ոյժերը՝ հասնելու ամենքի համար բաղձալի յաջողութեանը, աչքի առաջ ունենալով Կովկասի զարգացումը և բարօրութիւնը, համաձայն այն հիմքի, որ Թագաւոր Կայսրը մատնացոյց է տրել իմ անունով տուած իր Հրովարտականքը»:

ԿՈՄՍ ՎՈՐՈՆՑՈՎ ԴԱՇԿՈՎ

Յայտարարելով այդ մասին, հաստատապէս համոզված եմ որ Կովկասի ազգաբնակչութիւնը լիապէս կը զնահատէ Կովկասի փոխարքայի ներկայ հաղորդակցութեան ամբողջ կարեւորութիւնը: Առաջ բերած հեռագիրը աւետում է ազգաբնակչութեանը, որ մեր երկրում կատարվելու են բարեփոխութիւններ, որոնք շօշափելու են տեղական կեանքի ամենազբաւոյր կողմերը, և պէտք է իրականանան ազգաբնակչութեան սերտ մասնակցութիւնով, ի դէմս իր ներկայացուցիչների՝ առանց կրօնի, ազգութեան և դասակարգերի խտրութեան: Այդ դժուարին աշխատանքի սկզբնաւորութեան և նրա յաջող կատարման համար անպայման անհրաժեշտ է հասարակական կեանքի խաղաղ ընթացքը:

Այդ պատճառով ես կոչ եմ անում ազգաբնակչութեանը դէպ ի խաղաղութիւն, դէպ ի կարգ և օրէնքի պահպանութիւն, որպէս զի այնքան աւելի փութով Կովկասը մասնակցի ինի ներքին ստեղծագործող աշխատանքին, այն սկզբունքների հիման վրայ որոնք ցոյց են տրուած ներքին գործերի Միջախորհրդի անունով տրուած փետրվարի 18ի Բարձրագոյն հրովարտական և Կովկասի Փոխարքային տրուած փետրվարի 26ի հրովարտականքը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. Պատրիարքարանի

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ս. Զատիկի տօնին շնորհաւորութեան պաշտօնական այս-
ցելութիւնները պիտի ընդունի նոյն տօնի
երկրորդ օրը երկուշաբթի, 18 ապրիլ, ժամ
7ին, Ազգ. Պատրիարքարանի մէջ:

Իսկ Զատիկի ե. օրը, հինգշաբթի, 21
ապրիլ, Նորին Բարձր Սրբազնութիւնը պիտի
ընդունի ժամ 7ուկէսին, նոյնպէս Ազգ.
Պատրիարքարանի մէջ, Մայրաքաղաքիս
դպրոցներու ուսուցչական մարմիններուն եւ
աշակերտաց ու աշակերտուհեաց ներկայա-
ցուցիչները:

13 Ապրիլ 1905

ԵՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Անցեալ կիրակի օր տեղի ունեցաւ ի
Դատաւար, Յետու էֆ. Շամտանճեանի բը-
նակարանին մէջ, ընտանեկան վայելուչ հան-
դիսաւորութեամբ, Զգօն էֆ. Խորասան-
ճեանի նշանախօսութիւնը Օր, Հայկուհի Յ.
Շամտանճեանի հետ, երկու կողմի ազգա-
կաններու եւ բարեկամներու ներկայութեամբ
որոնց մէջ կը նշմարուէին Վսեմ. Ունճեան
էֆ. ները, Դրիգոր Խան եւ Տիկին Շամտան-
ճեան, Տեաք Կիւլպէնկեան, Խորասան-
ճեան, Պասմանճեան, Էվրէնեան եւ այլն,
ընտանեօք: Օր. Հայկուհի, Յետու էֆ. Շամ-
տանճեանի դուստրը, յրջանաւարտ Հօմ-
Աքուլ վարժարանէն, իր ստացած դաս-
տիարակութեան կը միացնէ բնածին շնորհ
մը որոնք համակրելի դարձուցած են զինքը
բոլոր ճանչցողներուն, և Զգօն էֆ., հան-
գուցեալ Ալիքսան էֆ. Խորասանճեանի որ-
դին, առեւտրական հրապարակի վրայ ծանօթ
է իր Ժիր գործունէութեամբը: Մեր շնոր-
հաւորութիւնները կ'ուղղենք Շամտանճեան
եւ Խորասանճեան ընտանիքներուն, այս
բարեգէպ նշանախօսութեան առթիւ:

ԱՏԱՆԱՅԷՆ կը հաղորդեն թէ՛ Գաւառ.
Ժողովը ի նիստ գումարուելով, իր ղեկանի
կազմութենէն ետքը՝ մասնաւորապէս զբա-

ղեր է Առաջնորդարանի պիւտճէի խնդրովը
եւ տարեկան 150 ոսկի յատկացնել որոշեր է
առաջնորդ Տ. Մուշեղ Մ. Վրդ. Ին օր հա-
ւաներ է այս կարգադրութեան:

Նիւ-Եմիւքիէն հասած լուրերէ առնելով,
օրաթերթերը ծանուցին թէ 32 տարեկան
Հայ մը, Պ. Մեսրոպ Մամուլեան, անձնաս-
պանութիւն փորձեր է՝ ուշվովէրի հարուած
մը պարպելով կուրծքին: Այս անձնասպա-
նութեան փորձը կատարուել է ճարտարա-
գործական սէնտիքայի շէնքին մէջ ուր գա-
ցած էր Պ. Մամուլեան գործի համար:
Ենձնասպան երիտասարդը հիւանդանոց փո-
խադրուելով: Բժշկական քննութեամբ հաս-
տատուել է թէ կրնայ աղէկնալ: Այս եղե-
րական արարքին շարժառիթը ընտանեկան
խնդիր մըն է, կ'ըսուի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

Կը խնդրենք Մասիսի այն գաւա-
ռային եւ արտասահմանի բաժանորդներէն,
որոնք ստացած են արդէն ներկայ տարե-
շրջանի առաջին եօթը թիւերը, փութացնել
իրենց բաժանորդագիւններուն առաքումը՝
եթէ կը փափաքին որ կանոնաւորապէս չա-
րունակենք իրենց թերթին առաքումը: Մեր
նոր տարեշրջանը, ինչպէս յայտնի է, կը
հաշուուի 1905 Մարտ 1է մինչեւ 1906
Մարտ 1:

ԹՈՒՔԱԽՅԻ ՎՐԱՅ

ԿԵՆՍԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրեց ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ժողովուրդին հասկնալի լեզուով մը՝ բա-
ցատրուած է ա'յնքան տարածուած և վտան-
գաւոր այս հիւանդութեան բնութիւնը: Յրո-
տակօրէն ցուցուած են վարակումէ զերծ
մնալու պարզ կերպերն ու դարմանումի ա-
մենէն բանաւոր եղանակները: Ամէն մարդու
և ամէն տան անհրաժեշտ պէտքը:

Գինը՝ միայն 60 փարա:


Դիմել Պալենց Գրատուն, Կ. Պոլիս, կամ
Հեղինակին՝ Պարտիզակ:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տէր Էւ ՏԵՐԵԳ—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎ Գ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱՆ Ի ԲԱՐԻՉ 1875ԻՆ

Կը գործէ ուղղակի ճրանս. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ
Ընթացիկ ապահովք. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Դրամագումար եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱԼՅԱՆԱՆ

Պօլս, Հանգրուալ խան Լո. 53
Կառուները պատուաւոր գործակալներ կը
փառաւորին: 7-50



ՅՈՎԱԿԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

Մուշապէրիէ Հիւանդանոցին եւ
Պարսկական Դեսպանատան
Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61
Զրահեան աքաբման

Պալպալեան ա՛՛՛ն օր ահուայի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունին. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է
ժամուան կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ահուա-
ները: Յորեկները ահուայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
նամքէն կտրեալ է: Վայելալ տառապող-
ժուհի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն
դարձանաւան մէջ: Ազգասերունք 8-10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ


Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵԾ ՓՈԼՈՑ ԹԻԻ 200

Կալաթա-Մէրայի Լիսէին դէմ
Գե. Նե. Շք. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11½
Բե. Գե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11½
Նիքոսի օրերը ժամադրութեամբ 6-10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆԴՈՆ 1782 ԻՆ,
ՈՒ ՓՈՐՄԷ Ի ՓՈԼԻՏ 1869ԻՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Դրամագումար եւ պահեստի դրամ
Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ասոյ հրաշքի դէմ Ապաւ-
վագրեալն Ընկերութիւն մըն է, ծանօթ
իւ պատուաւորութեամբ եւ փառաւոր մէջ
իւ անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրաշքի եւ
կայծակի դէմ ամէն տեսակ անշարժ եւ
շարժուն ստացուածք, յոյժ նպատաւօր
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՅՈՒՄԵՆ ՎՆԱՍՈՒՑ: Տա՛ւոր վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
օսկի:

Ընդհ. գործակալ Պօլսոյ եւ գաւառ-
աց. Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերալիս խան, Պանգ Օթումանի փոյ
Ղալաթիա:

Փախ դործակալք Ի Պօլիս

ՌՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԻՔԵԼԵԱՆ

Էմբն պիլ խան Յանգլեան խան

Զննիչ բիւզեքու

8-10

Ա. ԷՆՔՍԵՐՃԵԱՆ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆ Ց ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոյց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ, ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում. որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախառութիւններէն, որոնց կենթարկուին միտ ան անհնար. որ շահաբաժիններու ռապլան (accumulation d'es bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ զրուբեամբ զարծող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Փաթրքը Օղլու

Մամաճիւղ՝ Ղալաթիա, Իսայէթ Խան: — Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

8—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հոգեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ, ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԷՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային աւերակներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունքն է Ի Կ. Պոլիս, Բաքի Լիօն


Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ Խան, Թ. 52—53—54—55—56

8—10

ԶԿԱՆ ԻՒՂԻ ՊԷՏԲ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԿՍՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ



ԴԵՂԱՐԱՆ ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մահմուտ փաշա Պաշի, Ապուտ էճ.ի խանին դէմ 261

Դեղարանն նկատելով որ՝ Պօլսոյ կարհուր եւ կեդրան մէկ տեղը գտնուելուն առթիւ՝ Մօրինայի ձկան իւղի մասին եղած խնդրանքները հետզհետէ շատցած են, որոնք խնդրանքի եւ ի մասնաւորի Ալիէն յաճախողացոյցս գահացում մը տալու եւ փոքր ինչ ծառայութիւն մը մատուցանելու համար, ուրախ եմ այս անգամ լատարարելու թէ՛ մասնաւոր լանձու րօրութեան մը համաձայն բերել տուած ըլլալով Բէթէր-Մ Օլլէրի Մօրինայի ձկան իւղին առջին տեսակը, ԱՌԱՆՑ ՀՈՏԻ, կը ծախուի Դեղարան՝ թէ մասնաւոր շինարար մէջ են թէ քաջով, ալիէն փոփոկեալ մատմօքսի համար իսկ խիտ ախօթելի ըլլալով, թէ մեծերու եւ թէ՛ տէրակազմ պատիկ պաշտօն, Ուստի ամէն անգամ որ քաջ կը փոփոքի խմել թէ աժան եւ թէ առանց հոսի գումար եւ անխառնախ ձկան իւղ, թող հոճին դիմել դեղարանս, գէթ մէկ անգամ մասնաւոր մը ստուգելու մեր խօսքերուն ճշտութիւնը, Սոյն բազմամեայ դեղարանը, այս անգամ նոր կազմակերպութիւնէ մը ետքը, խաչիկ Զէսնեանի կողմանէ, քիչ ատենուան մէջ պատիւը ունեցաւ՝ զհաստատել արդոյ հաստատութեան, որմէ քաջաւորուելով պէտքը կը դիմայ իրեն ուղղութիւնը եւ նպատակը ներկայացնել հարուածեան:

ՆՊԱՏԱԿ. — Գահ ձգել իր յաճախողները միշտ՝ դեղերու թարմութեամբ, եւ արուեստին խղճամիտ գործադրութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ. — Մաքրութիւն, ապանխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղատարին սկզբունք եղած են:

Եւրպակոն առն մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբթու պատուաստի թարմ թիւ պեր (աւր գալիմի) կը հասնին բոսդալով:

Ամէն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշեց մասնաւորաբար հանրածառն Ռժիշկ ԱՆՆԱՀԷՐՏԻ ԷՅ.՝ որ ամէն Գ. Ե. Ե. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փոխառութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանասրահը, Դեղարանը ունի նաեւ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ, 8—10

ԿԱՐԱՊԵՏ ԷՅ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գրաւուին Տէր-Միստիսեան գրառուներ եւ մայր քաղաքի միւս հայ գրաւ-ճառներուն քով.

հաւսնր	դր.
Կարիք մարդոց երգումը	2 10
Ընտանեկան	2 15
Փարիզի մասնաւորութիւնները	1 2
Թափառական Հրեայ	4 50
Արուստեանի տղան	3 15
Հանրակատարին օճիրը	1 5

Սկզբունք Բաղ. Տնտեսութեան 1	4
Ընտանեկան գաղափարներ 3	15
	4 10

ՀԱՄԱՌՕՏ ՕՍՄ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ի պէս Ազգ. Գալաքրակաւն վարժարանաց գրեց ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Կեդրոնական դին է Կ. Պօլիս Զաքարիայ շինարար
Զինակալ խան, Փափաղեան Միսրեան
էֆ.ի Կազմաւոր. Գին 100 փԱՐԱ 5—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Դոհաբեղեցներու, ամեն տեսակ կահ կարասիներու եւ ամենեւնի նորաձեւ
հագուստներու, եւլմ.

Պատիւ օւնինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց
ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր լաբորի յաճախորդաց աւելի գո-
հացում ապրու նպատակաւ. ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ
զատ. կիներու եւ տղերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ՁԴԵՆՆԵՐԻՆ,
ՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ
ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, օֆիսներ եւ այլն.) ճոխ մթերանց մը հաստատած
ենք. խիստ զիւրաւատելի գիներով, եւ կանխիկ ու ապուրիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին զիմե վերաբերելու վա-
ճառատուները, օւրկէ անտարակոյս անհուն գոհակցութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապուրիկ գնողներու համար հարկւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարկւրին
5 շաբաթական վճարմամբ:
2. Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ:
3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմեայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գոր-
ծածուած բայց ու վրաս մնացած ըլլաւ՝ հաբիւրին 10 զեղչով եւ կռնուին: Իսկ ապա-
ուրիկ ծախում եւ անվրաս մնացած միմեայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարկւրին
15 զեղչով եւ կռնուին:

8-10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Դ. Շաքաթական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջտ պատրաստ են:

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի
ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԵՂԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-
ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱՌՈՒՄ ԵՒ ՇՈՒԿԱՌՈՒՄ ՈՒՂԵՒՈ-
ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՄ,

բուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար զիմե Կ. Պոլսոյ մասնաճիւղին. Ազարեան
խան, Վոյվոտա, Ղալաթիա,

8-10